



Սանատրուկ ՍԱՐԳՍՅԱՆ

Կենսաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Մարդու նկոր միտքը վճռական քայլությունը է կատարում թափանցելու միկրո-աշխարհի՝ ներբջջային ու ներառումային երևոյթների խորքը։ Նա ուղիներ է փընտրում հասարակությանը ծառայեցնելու անձայրածիր օվկիանոսների հարստությունը, պայմաններ է ստեղծում լուսնի վրա վայրէջք կատարելու համար։ «Մշտածող» սարքեր հնարելով ինքն իր ուղեղի հնարավորություններն է գերազանցում, բացում է անտեսանելի ատոմի մեջ թաքնված անսպառ հներգիայի շտեմարանի դուռը։

Եվ այդ բոլորն արվել ու արվում է հանուն կյանքի։

Խսկ ինչ է կյանքը, ինչպես է նա ծագել, զարգացել, բազմազան ձևեր ըստացել։

Որոնումների բազմադարյան արդյունքներն ամփոփում են «Կյանքը՝ դա սպիտակուցային մարմնի գոյածն է» Ենգելսի արտահայտության մեջ։ Ուրեմն՝ կենսակիր նյութը սպիտակուցն է, կամ, ինչպես նրան անվանում են, պրոտեինը, որից հիմնականում կազմված է կենդանության ամենապարզ միավորը՝ բջիջը։

Այն բոլորը, ինչ կազմված է կյանքի բազմատեսակության հետ՝ լինի դա գորտ կամ մրջյուն, մարդ կամ նապաստակ,

ցորեն կամ գալլուկ, հիվանդ կամ առողջ, երջանկության կամ սիրո զգացմունք, բոլո՞ր-բոլորը սպիտակուցային նյութի գոյածների դրակորումներ են։

Այո՛։ Դա այդպես է, և այժմ ոչ ոք այլ կարծիք չունի։


Այն դեպում բանին են այդ սպիտակուցները, ինչպես են նրանք գոյանում, ինչ կազմություն ունեն և, վերջապես, ինչ է տեղի ունենում նրանց նետ։

Գիտության առաջ ծառացած այս բոլոր հարցերը ժամանակին ստացել են բավարար պարզաբանում։ Հայտնաբերվել են սպիտակուցների հակարավոր տեսակներ և հայտնի են, որ բոլորն ել ունեն նման կառուցվածք։

Սպիտակուցները կազմված են ավելի պարզ միացություններից՝ ամինաթթուներից, խսկ որոշ, ավելի բարդ սպիտակուցներ իրենց կազմության մեջ ունեն նաև ծծումք ու երկար։

Շատ կարևոր է, որ սպիտակուցների ուրույնությունը, որն առաջ է բերում կյանքի դրսնորման ձևերի զանազանություն, կախված է նրանց կառուցվածքի մեջ մտնող ամինաթթուների տեսակից, բանակից և իրար միանալու դիրքից։

Ինչ վերաբերում է դրանց բնական հանապարհով առաջացմանը կամ սինթեզմանը, ապա ճիշտ կլիներ ասել, որ



Մոտ իբրև նորմոններ, և նույն ավղեցու-
րյունն ունեն օրգանիզմի վրա:

Տեսն այդ է, որ կազմում է կյանքի էու-
րյունը կամ գոնե նրա հական կողմը:
Սպիտակուցները գոյանում են ինքնա-
պերարտադրման, իրենք իրենց կառուցե-
լու ձևով:

Ապրոդ, այսինքն կենսունակությամբ
օժտված սպիտակուցային մարմինն ար-
տարին միջավայրից կլանում է անհրա-
ժեշտ ելանդութեր և նրանցից կառուցում
ճիշտ իր նմանը: Բայց բանի որ այդ
սլրոցեսում նա նաև «մաշվում է», ապա
ինքնավերարտադրման պրոցեսը հանդի-
սանում է միաժամանակ իբրև ինքնավե-
րականգնում:

Ահա այդ հատկությամբ, այսինքն
ինքնավերարտադրմամբ և ինքնավերա-
կանգնմամբ է, որ կենդանի նյութը տար-
բերվում է անկենդան նյութից:

Մոտ 10 տարի առաջ, հիմնվելով այդ
տեղեկությունների վրա գիտությունը մի
թափք կատարեց դեպի նվիրական նպա-
տակը. արհեստական եղանակով ստաց-
վեցին սպիտակուցային միացություններ՝
օքսիտոցինը և վագոպրեսինը: Ճիշտ է,
որանք համեմատաբար պարզ սպիտա-
կուցներ են, բայց լրիվ նման են իրենց
բնական հոմոլոգներին, որոնք արտադր-
վում են բարձր կարգի կենդանիների

մոտ իբրև նորմոններ, և նույն ավղեցու-
րյունն ունեն օրգանիզմի վրա:

Սակայն ո՞չ բնական, և ոչ էլ ար-
ենաւական սպիտակուցները, որոնց մին-
չև օրս հաջողվել է արտապատել կամ
սինթեզել, կենդանություն չեն ցուցաբե-
րում: Պարզվում է, որ կյանքը ոչ թե
մեկ, այլ մի շարք սպիտակուցների հա-
մագործակցության արդյունքն է: Հնդ ո-
րում, կյանքի նույն երևությունների առա-
ջացման համար պահանջվում է նույն
սպիտակուցների կոմպլեքսը: Եվ բայ-
որ գորտից ծնվում է գորտ, իսկ ցորե-
նի հատիկից ցորեն է ածում, ապա կեն-
դանի օրգանիզմում պետք է որ գոյու-
թյուն ունենա սպիտակուցների սինթեզ-
ման որոշակի ու կայուն «ծրագիր», որն
ապահովի ծիշտ նույն կառուցվածքի ըս-
տակուցների սինթեզումն օրգանիզմում
կամ բջջի սահմաններում:

Եվ, որպեսուել սերնդից-սերունդ օր-
գանիզմների հիմնական (տեսակային) և
սինչև անգամ անհատական հատկու-
թյունները պահպանվում են կայուն վի-
ճակում, ապա սպիտակուցների սինթեզ-
ման «ծրագիրը» պետք է որ ծնողից սե-
րնդին փոխանցվի: Այդ, անշուշտ, պետք
է կատարվի սեռական բջիջների միջո-
ցով:

Ահա այս հարցի ուսումնասիրության
ընթացքում հայտնաբերվեցին վճռական
նշանակություն ունեցող այն գաղտնիք-
ները, որոնց պարզաբանման ժամանակ
կենսաբանական երկու առաջատար գի-
տությունների՝ բիոքիմիայի և գենետիկայի
հետարրությունները համընկան:

Պարզվել է, որ սպիտակուցների տե-
սակների և նրանց վերարտադրման պրո-
ցեսում ուրումնության կայուն պահպա-
նումը հսկվում է բջջում եղած նուկլեի-
նաթթունների (կորիզաբթունների) կողմից:
Այսինքն նեսն իրենք էլ հանդիսանում
են այն «ծրագիրը», որի անհրաժեշտու-

Քյունն զգացվում է սպիտակուցների վերաբարձրման պրոցեսում:

Հայտնի է, նուկլեինաթրուների երկու տեսակ, մեկը տեղադրված է բջջի կորիկում և թելադրում է սպիտակուցների սինթեզման «տեխնոլոգիան», իսկ մյուսը, որի օգնությամբ նաև սինթեզման «խումանոցներին» է հասցնում «ծրագրի» եռթյունն ու, հավանական է, եւանդութերը, գտնվում է բջջի բոլոր մասերում:

Երկուսն էլ ունեն նման կառուցվածք: Նրանք բարձր պոլիմերային միացություններ են, կազմված հարյուր-հազարավոր մեկը մյուսին միացած նման օղակներից՝ նուկլեոտիդներից (կորիզիկներից): Ամեն մի նուկլեոտիդը իր կազմության մեջ ունի մեկական մոլեկուլ ազոտական հիմք, շաբարային (ածխաջրային) միացություն և փոփոքրաթոռ:

Բիոքիմիկուները գտան, որ նուկլեինաթրուների կազմության մեջ մտնող շաբարային նյութերը երկու տեսակ են՝ դիզոքսինուկլեինաթրու (ԴՆԹ), և ռիբոնուկլեինաթրու (ՌՆԹ):

ԴՆԹ-ն գտնվում է բջջի կորիզում, ՌՆԹ-ն ամենուրեք՝ բջջի մեջ:

Իսկ ինչպես է «զրված» սպիտակուցների սինթեզման «ծրագիրը» նուկլեինաթրուների կառուցվածքով: Զէ որ ըսպիտակուցները բավահանգար են:

Ահա թե ինչպես:


Պարզել է, որ նուկլեինաթրուների կազմության մեջ մտնող նուկլեոտիդները և տարբեր տեսակ են լինում: Նրանք սիմբանցից տարբերվում են ազոտային հիմքի պարունակությամբ:

Ջանի որ նուկլեինաթրուները կազմված են հազարավոր նուկլեոտիդներից, ապա նրանց կառուցվածքի մեջ կարող են մտնել բոլոր տեսակի ազոտային հիմք ունեցող նուկլեոտիդները, այն էլ՝ ամեն մի տեսակից բավարիկ անզամ:

Սպիտակուցների սինթեզման «ծրագիրը» «զրվում» է նույն հիմունքներով,

ինչպես Մորգեի սիստեմում տառերն ու բառերը, միայն այն տարբերությամբ, որ Մորգեի սիստեմում օգտվում են երկու տարբեր էլեմենտներից՝ կետ (.) և գիծ (—), իսկ սպիտակուցների սինթեզման «ծրագիրը» կազմվում է չորս տարբեր նուկլեոտիդներից: Սրանք նշանակվում են իրենց մեջ ունեցած ազոտային հիմքի անվանումների տառերով՝ աղեին (Ա), գուանին (Գ), ցինտոպին (Ց), ուրաշիլ (ՈՒ):

Հասկանալի է, որ եթե Մորգեի սիստեմում միայն երկու տարբեր էլեմենտներից (կետ և գիծ) կարելի է կազմել հազարավոր բառեր, ապա չորս տարբեր նուկլեոտիդներից հնարավոր է ստեղծել շատ ավելի բարդ կառուցվածք ունեցող սպիտակուցների սինթեզման «ծրագիր»:



ԴՆԹ-ի ստրուկտորային կառուցվածքը:

Այսպիսով, եթե կյանքի արտահայտման թե՛ հիմնական և թե ինդիվիդուալ բազմաձևությունները, որոնց կայունությունը պահպանվում է սերունդներում, հսկվում և իրականանում է նույլեինարթունների կառուցվածքով, ապա ժառանգաբար՝ ծնողներից սերնդին կայուն հասկանիշների փոխանցումը պետք է որ նույնպես կապված լինի նույլեինարթունների հետ:

Ուրեմն՝ բոլոր կենդանի էակների, այդ թվում և մարդու ժառանգական հասկությունների կայուն փոխանցումը սերնդին կամ նրա փոփոխությունները, որ աեղի են ունենում կյանքի պայմանների ազդեցության տակ, նույնպես կապված են նույլեինարթունների կառուցվածքի հետ:

Ահա թե կյանքի էության խորքում թաքնված ինչպիսի կարևոր օրինաչափություններ են հայտնաբերել բիոբիմիկուններ, գենետիկներն ու նրանց մյուս վիճակիցները՝ երկարատև որոնումներից հետո:

Եվ այդ հպոր, համագործակցված միտքը պահպան է առաջ:

Ո՞ւր:

Դեպի նույլեինարթունների սինթեզումը և արհեստական եղանակով սպիտակուցներ ստանալը:

Իսկ հետո՝

Հետո պայմաններ կստեղծվեն հասարակության առօրյա կարիքները արհեստական եղանակով ստացված սպիտակուցներով բավարարելու համար:

Այսուհետև, գիտությունն անկանկած կհայտնաբերի սպիտակուցների և նույլեինարթունների այն կոմպլեքսը, որը նյութափոխանակության միջոցով ինքնավերարտադրման ընդունակություն կունենա, այսինքն՝ արհեստական ճանապարհով կստեղծվի կյանք:

Դա կլինի մարդկության պատմության ամենամեծ հայտնագործությունը:

Եվ մենք այս կանգնած ենք այդ մեծ հայտնագործության շեմին:



ԹԵՐՄՈԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԴԱՆԱԿ

Դրեպինի բժշկական հեեւտրունիկայի գիտատեխնիկական կենտրոնում ստեղծել են թերմոէլեկտրական «դանակ», որով վիրաբուժը կարող է անարյուն կտրվածքներ անել: Այդպիսի «դանակ» ոչ միայն կտրում է, այլև շնրմության ներգործության տակ մակարդում է արյունը, որի շնորհիվ արյունատար անորները փակվում են:

Առև գործակալություն

ԿԱՐՑԱՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԺՎՈՒՄ Ե ՈՒԼՏՐԱՉԱՅՆՈՎ

Բուժման այս մեթոդը կիրառում են Տոկովի Կենտրոնական հիվանդանոցի բժիշխները:

Ակնախոռոչի վրա ազդում են 12000 հերց հաճախականության ուլտրածայնով: Ուլտրածայնի ներգործությունից առաջացած տարությունը և աչքի թաղանքի կրծատումը ուժեղացնում են արյան շրջանառությունը և ակտիվացնում նյութափոխանակությունը ցանցում: Ուլտրածայնի ավելցությունը բարենպաստ է ազդում նաև ակնախոռչի այլ նյարդային վերջույթների վրա:

Մի քանի շաբաթվա ընթացքում նոր մեթոդով բուժվել է 220 մարդ: Հիվանդների 80 տոկոսի մոտ տեսողությունը զգալիորեն լավացել է: Վատ հետևանքներ չեն նկատվել:

ՏԱԱԱ